



1934 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

(Կազմված է ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. մայիսի 31-ի «Գյուղահարկի 1934 թ. կանոնադրությունը» հաստատելու վերջման, նույն թվի «գյուղի բնակչության ինքնահարկման» մասին վերջման, ԱՍՖԽ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. հունիսի 8-ի «1934 թ. գյուղահարկը կիրառելու կարգի մասին» վերջման և ՀՍԽՀ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1934 թ. հունիսի 10-ի «1934 թ. գյուղահարկը կիրառելու մասին» վերջման հիման վրա) :



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1934 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՈՐԵՆՔԸ



ՊԵՏՂՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

Հատված I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գյուղատնտեսական հարկին յենթակա յեն.

ա) կուլեկտիվ տնտեսությունները (գյուղատնտեսական կոմունաները, գյուղատնտեսական արտելները և հողագործաման ընկերությունները) .

բ) կուլտնտեսականների անհատական տնտեսությունները .

գ) գյուղացիական անհատական տնտեսությունները :

2. Այն արհեստագործական - գյուղատնտեսական խառն արտելները (արհեստագործական կուլտնտեսությունները), վորոնք մտնում են արհեստագործական կոոպերացիայի միությունների մեջ, իրենց յեկամուտների նկատմամբ, գյուղատնտեսական հարկի յենթակայեն այն դեպքում, յերբ նրանց մեջ գյուղատնտեսությունը հանրայնացված ե վոչ պակաս, քան տվյալ շրջանի գյուղատնտեսական կուլտնտեսություններում :

Ձկնորսական այն կուլտնտեսությունները, վորոնց մեջ նրանց անդամների գյուղական տնտեսությունը հանրայնացված ե, ըստ իրենց յեկամուտների, յենթարկվում են գյուղատնտեսական հարկին (բացի ձկնորսության յեկամուտներից, վորոնք յենթակա յեն ձկնորսական միասնական տուրքին) :

3. Գյուղատնտեսական հարկման տարին համարվում ե 1934 թ. հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը :



1-34679p

Հատված II

ԿՈՒՆԵՍՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Ամեն մի առանձին կոլտնտեսություն հարկվում է՝

ա) աշնան ու գարնան մշակույթների ցանքի այն տարածությունից, վորը սահմանված է նրա համար՝ 1933 թ. աշնան և 1934 թ. գարնան պլանով:

բ) խոտհարքների և բաղամայա տունկերի փաստական տարածությունից (մրդատու պարտեզներ, խաղողի այգիներ և այլն):

գ) վոչ գյուղատնտեսական յեկամություններից:

Ձի հարկվում աշնան ու գարնան մշակույթների այն տարածությունը, վորը ցանված է սահմանված պլանից դուրս:

5. Կոլեկտիվ տնտեսությունների (գյուղատնտեսական կոմունաների, գյուղատնտեսական արտելների և հողը միատեղ մշակող ընկերությունների) գյուղհարկը հաշվելու նպատակով սահմանել հետևյալ միջին դրույքները ռուբլիներով տարբեր մշակույթների և տունկերի յուրաքանչյուր մեկ հեկտար տարածություն համար, սահմանելով 1933 թ. հարկի դրույքները:

Տես տախտակ № 1

6. Դրույքատախտակում չթված ցանքերը հարկվում են հացահատիկային մշակույթների համար սահմանված դրույքներով:

7. Նկատի ունենալով, վերջին յերկու տարիներէ

ընթացքում անբերիլության պատճառով Ախտայի, Ապարանի, Բասարգեչարի, Նոր-Բայազետի, Մարտունու և Փաշալի շրջաններում աշխատավոր բնակչության համար ստեղծված պայմանները, ազատել այդ շրջաններում 1934 թ. գյուղհարկից կոլեկտիվ տնտեսությունները, կոլտնտեսականներին և աշխատավոր մենատնտեսներին:

8. Կոլտնտեսությունների վոչ գյուղատնտեսական յեկամությունների հարկը հաշվելիս, պետք է յեղնել 1933 թվականին ստացված յեկամտից, հանելով բոլոր արտադրական ծախսերը:

Այդ յեկամություններից հարկ է վերցվում հետևյալ դրույքներով:

ա) Կոմունաներից և արտելներից՝ 3,5 կոպեկ, հողդդտադործման ընկերություններից՝ 5 կոպեկ:

Ծանոթություն. — Կոլտնտեսություններում գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում ձկնորսության այն բոլոր յեկամությունները, վորոնք յենթակա յեն միասնական ձկնորսական հարկի:

9. Բացի գյուղատնտեսական հարկից, կոլտնտեսություններն ուրիշ վոչ մի հարկի չեն յենթարկվում, բացի՝

ա) այն ձեռնարկությունների ու դրադմունքների շրջանառության հարկից, վորոնք հարկվում են շրջանառության հարկի որենքով:

բ) ջրային տուրքից՝ ջրովի հողադործության շրջաններում:

Բ. ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԱՏՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Անասնաբուծության, կաթնատնտեսության,

Թռչնաբուծության և մեղվաբուծության հետադադար-
գացմանը նպաստելու նպատակով, կոլտնտեսություն-
ների տրվում են հետևյալ արտոնութայունները:

ա) հարկից բուրդովին ազատվում են ամեն տե-
սակ անասունները, թռչունները, ճագարները և մե-
ղունները:

բ) այն կոլտնտեսություններում, վորտեղ կան
ապրանքային ֆերմաներ, հարկից ազատվում է կերա-
բույսերի ցանքի այն ամբողջ տարածութայունը, վորի
բերքը հանձնվում է կոլտնտեսային ապրանքային
ֆերմային: Հարկից ազատվում է նաև ապրանքային
ֆերմաների վոչ-գյուղատնտեսական ձեռնարկութայուն-
ների յեկամուտը:

գ) Կոճղահատված հողամասերի խոտհարքները
հարկից ազատվում են յերկու տարի ժամանակով,
հաշված կոճղահատելու օրից:

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ

ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Այն առաջաւոր կոլտնտեսությունները, վո-
րոնք կիրառել են ադրոտեխնիկ ձեռնարկումներ, իրօք
կատարել են կարևորագույն մշակութային բերքատու-
րութայունը բարձրացնելու պլանը 15 տոկոս ղեղչ են
ստանում, նրանց համար հաշված հարկի դրույքից:

Այդ գումարներով հատուկ ֆոնդեր են ստեղծ-
վում տվյալ կոլտնտեսության մեջ՝ պարզեցատրելու
այն լավագույն բրիգադներին ու առանձին հարվածա-
յին կոլտնտեսականներին, վորոնք ապահովել են բեր-
քատութային պլանի կատարումը:

12. Հարկից բուրդովին ազատվում են բոլոր կերա-
բույսերի սերմնարանները (առվույտ, լյուցերն և
այլն), բանջարանոցային մշակութային բերի ար-
մատարտույների սերմնարանները: Հարկից բուրդո-
վին ազատվում են լյուպինի և այլ մշակութային այն

ցանքերը, վորոնք հերկվում ու թաղվում են հողում,
վորպես պարարտանյութ:

13. Գյուղահարկից լրիվ ազատվում են ընչվորա-
կան և կիսաընչվորական տնտեսություններից կաղմ-
ված կոլտնտեսությունները այն դեպքում, յերբ նրանք
նստակյաց կյանքի յեն անցնում:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ ՁԱՐԳԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Ծաքարի ձակնդեղի ցանքերը բուրդովին ա-
զատվում են հարկից:

15. Թեւատու վուշի այն ցանքերը, վորոնք կա-
տարվել են աշնանից հերկված խամ հողում, առվույ-
տից հետո, կորդերում (խամ հողում), ազատվում են
հարկից:

Թեւատու վուշի մյուս ցանքերը հարկվում են ար-
տոնյալ դրույքներով, այն է՝ հացաբույսերի դրույք-
ներով:

16. Կանեփի ցանքերը (նեւառյալ հարավային
կանեփի ցանքերը) ամբողջովին ազատվում են հար-
կից:

17. Հարկից բուրդովին ազատվում են՝

ա) նոր շրջաններում ցանված բամբակը (Ուկրա-
յինա, Հյուսիսային Կովկաս, Ազով-Սևծովյան յեր-
կիր, Ղրիմ, Դաղստան, Ստալինգրադի յերկիր):

բ) Վոռոդլով հողագործութային բոլոր շրջանների
շվոռդովով հողամասերում ցանված բամբակը:

Բամբակի մյուս բոլոր ցանքերը հարկվում են
արտոնյալ դրույքով, այն է՝ հացաբույսերի դրույք-
ով:

18. Հարկից բուրդովին ազատվում են՝ կենսֆի,
լեւդերի, ռամիի, կանառնիկի, պերիլլի, ղենագեր-
չակի, լյուֆայի բոլոր ցանքերը և ցիտրուսային տուն
կերը, ինչպես և գայլուկի, յեթերային, յուղատու,

դեղատու և տեխնիկական բույսերի կոնտրակտացման
յենթարկված ամբողջ տարածությունը:

19. Հարկից բուրբուլին աղատվում են՝ աշնանա-
վար հողամասերում գնդածաղկի ցանքերը, յեթե կա-
տարվում են ագրոտեխնիկ կանոնները:

20. Հարկից լիովին աղատվում են արդյունաբե-
րության համար կոնտրակտացիայի յենթարկված յե-
ղերդակի (ցիկորիի) այն ցանքերը, վորոնք կատար-
վել են այդ մշակույթների համար նոր շրջաններում:
Այդ շրջանների ցուցակը կազմում է ԽՍՀՄ-ի Ֆին-
սողկոմատը համաձայնեցնելով ԽՍՀՄ Հողօրդկո-
մատի հետ:

ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ

ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Գյուղատնտեսական հարկից աղատվում են
կոլտնտեսությունների այն յեկամուտները, վորոնք
ստացվում են նրանց գյուղատնտեսական մթերքները
թե հում և թե վերամշակված ձևով վաճառելուց:

22. Չեն հարկվում այն յեկամուտները, վորոնք
ստացվում են ամեն տեսակ սունկեր, վայրի պտուղ-
ներ (սերմավոր և կորիզավոր), յեղեմնակաղին, հա-
ճար, շաղանակ, կաղնու պտուղ, ինչպես և վայրի
հատապտուղ վաճառելուց:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

23 Այն կոլտնտեսությունները, վորոնք որինակե-
լի հիմքի վրա յեն դրել հաշվառումն ու հաշվետու-

թյունը, հարկի հաշված չափից ստանում են մինչև
10 տոկոս զեղջ:

Այդ գումարներով տվյալ կոլտնտեսության մեջ
ստեղծվում է հատուկ ֆոնդ՝ պարգևատրելու այն
հարվածային կոլտնտեսականներին, վորոնք որինակե
լի հիմքի վրա յեն դրել հաշվառումն ու հաշվետու-

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԶԻՆՎՈ-
ՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀԵՐՈՍՆԵՐԸ, ՊԱՏՎԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐ-
ՎԱԾ ԱՆՁԻՔ, ՌԱԶՄԱԿԱՆԱՅՎԱԾ ՊԱՀԱԿՈՒՄ ՅԵՎ
ՍԻԼԻՑԻԱՅՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ԱՆՁԻՔ, ՀԱՇՄԱՆԴԱՄ-
ՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՎՐԵԺԽՆԴՐՈՒ-
ԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵ-
ՐԸ, ՅԵՎ ԱՅԼՆ:

24. Կոլտնտեսությունից հասնող հարկի ամբողջ
գումարից հանվում է այն մասը, վորը բաժին է ընկ-
նում կոլտնտեսության հետևյալ անդամներին՝

ա) Խորհրդային Միության հերոսներին, ԽՍՀՄ-ի
պատվանշաններով կամ պատվավոր հեղափոխական
դերերով պարգևատրված անձանց և աշխատանքի
հերոսներին:

բ) կադրային, շարային, կրտսեր պետկազմի ժամ-
կետային (անընդհատ) կամ դերժամկետային զին-
վորական ծառայողներին, առանց բացառելու նաև
1934 թ. աշնանը զորակոչվածներին:

դ) կադրայիններին և պահեստի (ռեզերվի) մի-
ջին, ավագ ու բարձր պետկազմի զինվորականներին:

դ) կրտսեր հրամկազմի այն զինվորականներին,
վորոնք յերկարատև արձակուրդից փոխադրվել են
տեղեկություն զորամասերի փոփոխական կազմը:

յե) Բանվորազուղացիական Կարմիր Բանակի յերկրային զորամասերի միջին, ավագ, բարձր պետական կարգի յերկարատեղ արձակուրդում, պահեստում և փոփոխական կազմում գտնվող այն անձանց, վորոնք զբաղված են աշխատավորների զինվորական պատրաստությամբ, վորպես Պաշտ-Ավիաբեմի հաստիքային աշխատողներ:

զ) նախկին կարմիր զվարդիականներին և կարմիր պարտիզաններին:

ե) այն անձանց, վորոնք գտնվում են պետական հատուկ նշանակութուն ունեցող ձեռնարկությունների ու կառուցվածքների ռազմականացված պահակի կամ ռազմականացված հրշեջ պահակի շարային, լաբորանտ կամ տնտեսական կազմում, այն անձանց, վորոնք գտնվում են Բանվորազուղացիական Միլիցիայի շարային, վարչական ու տնտեսական կազմում, ինչպես և այն անձանց, վորոնք գտնվում են ուղղիչ աշխատանքային հիմնարկներին ու պերատիվ, վարչական կամ տնտեսական կազմում:

ը) պատերազմի և աշխատանքի այն հաջմանդամներին, վորոնք դատված են հաջմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ կատեգորիաները:

թ) զուղական այն ակտիվիստների ընտանիքներին, վորոնք տուժել են կուլակային վրեժխնդրությունից՝ սոցիալիստական վերակառուցման և հանրային սեփականության պաշտպանության համար մղվող պայքարում:

ժ) անտառի այն աշխատողների ընտանիքներին, վորոնք սպանվել են պետական գույքը պաշտպանելու, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ այդ կապակցությամբ:

ժա) կուլտեստության մեջ ընդունված լիակատար վորերը և մանկատների սաները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — արտոնությունները պահ-

պանվում են «բ» և «գ» կետերում հիշատակված զինվորական այն ծառայողների նկատմամբ, վորոնց տրվել է յերկարատեղ արձակուրդ, կամ վորոնք փոխադրվել են պահեստ, կամ բոլորովին արձակվել են ծառայությունից՝ 1934 թ. հունվարի մեկից հետո:

ՎԵՐԱԲՆԱԿՎԱԾ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Պլանային կարգով նոր վայրեր վերաբնակված կուլտեստությունները ստանում են հետևյալ արտոնությունները՝

ա) այնպիսի վայրեր վերաբնակվածները, վորտեղ պահանջվում է կոնդահարություն, կամ կատարել այլ աշխատանքներ՝ կուլտուրական հողեր պատրաստելու համար, — լիովին ազատվում են հարկից՝ 6 տարի ժամանակով:

բ) այն կուլտեստությունները, վորոնք վերաբնակվել են այնպիսի վայրեր վորտեղ անհրաժեշտ է մշակել խամ հողերը, բոլորովին ազատվում են հարկից՝ չորս տարի ժամանակով:

գ) այն կուլտեստությունները, վորոնք վերաբնակվել են այնպիսի վայրեր, վորոնք չեն պահանջում խամ հողերի մշակում, հարկից ազատվում են յերեք տարի ժամանակով:

դ) այն կուլտեստությունները, վորոնք վերաբնակվել են Հեռավոր Արևելյան յերկրի, Կարելիայի ինքնավար հանրապետությունը և Մուրմանի շրջանը, բոլորովին ազատվում են հարկից՝ 15 տարի ժամանակով:

ՃԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Շրջանային Գործադիր Կոմիտեներն ազատում են հարկից տարերային աղետներից տուժած կուլտես-

սությունները՝ ամբողջովին կամ մասամբ, նայած նրանց կրած վնասի չափին:

Գ. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

27. Կոլտնտեսությունների հարկը հաշվում են չրջանային ֆինանսական բաժինները: Հարկի վճարման ծանուցագրերը կոլտնտեսությունների վարչություններին հանձնվում են ամենաուշը մինչև 1934 թ. հունիսի 15-ը:

28. Հարկը վճարվում է հետևյալ ժամկետներին՝

ա) Լեռնային և նախալեռնային շրջաններում առաջին ժամկետը—մինչև սեպտեմբերի 15-ը, վճարվում է հարկի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետը մինչև հոկտեմբերի 15-ը, վճարվում է հարկի մնացած 50 տոկոսը:

բ) Դաշտային (բամբակադորձական և խաղողադորձական) շրջաններում առաջին ժամկետը—մինչև հոկտեմբերի մեկը, վճարվում է հարկի 50 տոկոսը:

2-րդ ժամկետ՝ մինչև նոյեմբերի 1-ը վճարվում է հարկի մնացած 50 տոկոսը:

Հ ա տ վ ա ծ III

ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒ- ԹՅԱՆ ԶՀԱՆՐԱՅՆԱՑՎԱԾ ՄԸՄԻ ՀԱՄԿՈՒՄԸ

Ա. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

29. Այն կոլտնտեսականները, վորոնք չհանրայնացված տնտեսության յեկամուտներ չունեն, բոլորովին ազատվում են հարկից:

30. Կոլտնտեսականների չհանրայնացված յեկամուտներից (մարգագետիններից, դյուղատնտեսության հատուկ ճյուղերից, տնայնագործական—արհեստավորական զբաղմունքներից, վոչ դյուղատնտեսական և վոչ վարձու աշխատանքի վաստակից, հարկը պանծվում է կայուն դրույքներով:

ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՅՈՒՆ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ

ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Հարկի կայուն գրույթները ուղարկներով

Արարան, Վեդի, Ղափսն, Փաշալու, Մարտունի:

Ն. Բաղդիտ, Բասարդեշաբ, Ախտա, Քեշիշքենդ,

15

Ադրաբա, Ալաշկերդի, Արթրի, Դորբա, Դիլիջան, Իջևան,
Մեղրի, Թալին, Շամդադի, Սրախան, Աշտարակ, Կոտայք

20

Վաղարշապատ, Ղարաբլիսա, Լեռնական, Հուրդուգուլի

25

Համարլու, Ստեփանական

30

31. Շրջանային դործադիր կոմիտեները 30-րդ հոդվածում մատնանշված սահմաններում (10-30 հոբելի), գյուղխորհուրդների և գյուղերի համար, իսկ անհրաժեշտ դեպքում նաև առանձին կոլտնտեսությունների համար, սահմանում են հարկի վերջնական դրույքներ, առանց փոխելու այն միջին դրույքը, վորը սահմանված է տվյալ շրջանի համար: Չի թույլատրվում գյուղի կամ կոլտնտեսության սահմաններում կոլտնտեսականների առանձին տնտեսությունների համար սահմանել տարբեր դրույքներ: Շրջանային դործադիր կոմիտեները և գյուղխորհուրդները պատասխանատու յեն, վոր կոլտնտեսականներից վերջավոր հարկը վոչ մի դեպքում չգերազանցի տվյալ գյուղի կամ կոլտնտեսության համար սահմանված դրույքից:

32. Այն տնտեսությունները, վորոնց կազմում կա 2 հոգուց վոչ ավելի աշխատունակ անդամ, ընտանիքի վոչ աշխատունակ անդամների համար հետևյալ չափով դեղջ է արվում հաշված հարկից. յերեք վոչ աշխատունակ անդամ լինելու դեպքում, հարկի չափը նվազեցվում է 20 տոկոսով, չորս և ավելի վոչ աշխատունակ անդամ լինելու դեպքում՝ 30 տոկոսով:

33. Աշխատավարձը գյուղատնտեսական հարկի չի յենթարկվում, իսկ յեկամտային հարկի յենթարկվում է ըստ աշխատանքի վայրի:

Կոլտնտեսության անդամ բանվորներն ու ծառայողները, յեթե նրանք իրենք, կամ նրանց ընտանիքի աշխատունակ անդամները չեն աշխատում կոլտնտեսության մեջ կամ նրանց աշխատանքը կրում է պատահական, վոչ սիստեմատիկ բնույթ (որինակ՝ արձակուրդի ժամանակ, հանգստի օրերին և այլն) և արտահայտվում է սակավաթիվ աշխորերով, չպետք է յենթարկվեն գյուղատնտեսական հարկի, յեթե նրանց չհանրայնացված գյուղական տնտեսությունը չի դերադանցում 60-րդ հոդվածում մատնանշված չափից:

Բ. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՆՏՆՏԵՍԱ ԿԱՆՆԵՐԻՆ

34. Կոլտնտեսականների չհհանրայնացված յեկամոտները հարկելիս, հաշվի չեն առնվում կոլտնտեսությունից նրա ստացած յեկամոտները (աշխորերի վարձատրումը):

35. Անասնաբուծութայն, թռչնաբուծության ու մեղվաբուծության դարգացմանը նպաստելու նպատակով, հարկից ազատվում են կոլտնտեսականների բոլոր անասունները, թռչունները, ճագարները, մեղուները:

36. Կոլտնտեսական առեվտուրը դարգացնելու նպատակով, կոլտնտեսականների նկատմամբ չի դործադրվում հատուկ այն հարկումը, վորին յենթակա յեն մեկնատնտեսները շուկայական գներով գյուղատնտեսական մթերքների վաճառումից ստացված յեկամոտների համար (61-րդ հոդված):

37. Գյուղխորհուրդները կարող են ամբողջովին կամ մասամբ ազատել հարկից առանձին սակավադրոտնտեսությունները:

Սակավադրության պատճառով հարկից մասամբ ազատվելիք տնտեսությունների ցուցակը պետք է ներկայացնել շրջանային հարկային հանձնաժողովին, ի հաստատություն:

38. Վերաբնակ կոլտնտեսության անդամների տնտեսությունները հարկից ազատվում են նույնպիսի ժամանակով, վորը սահմանված է հենց կոլտնտեսությունների համար:

39. Հարկից լիովին ազատվում են այն կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնց ընտանիքի կազմի մեջ մտնում են՝

ա) Խորհրդային Միության հերոսները, ԽՍՀՄ-ի պատվանշաններով կամ նրա անդամները հեղափոխական

գենքով պարզեցվատրված անձինք, աշխատանքի հերոսները.

բ) կադրային, շարային և կրտսեր պետկազմի ժամկետային (անընդհատ) կամ գերժամկետային զինվորականներ, առանց բացառելու 1934 թ. աշնանը զորակոչվածներին.

գ) Բանվորադյուղացիական Կարմիր Բանակի կադրային և ռեզերվում գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմի զինվորականները.

դ) կրտսեր հրամկազմի զինվորականները, վորոնք յերկարատեվ արձակուրդից փոխադրված են յերկրային զորամասերի փոփոխական կազմը.

յե) Բանվորադյուղացիական Կարմիր Բանակի տերիտորիալ զորամասերի յերկարատեվ արձակուրդում, պահեստում կամ փոփոխական կազմում գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմի այն անձինք, վորոնք պարապում են աշխատավորների ռազմական պատրաստությամբ, վորպես Պաշտ-Ավիաբիմի հաստիքային աշխատողներ.

զ) նախկին կարմիր գվարդիականները և կարմիր պարտիզանները.

ե) պետական հատուկ նշանակութուն ունեցող ձեռնարկութունների ու կառուցվածքների ռազմականացված պահակի և ռազմականացված հրջեղ պահակի շարային և վարչական-տնտեսական կազմին պատկանող անձինք, Բանվորադյուղացիական Միլիցիայի ու պերատիվ, շարային, վարչական ու տնտեսական կազմի անձինք, ինչպես և ուղղիչ աշխատանքային հիմնարկների ու պերատիվ, վարչական, տնտեսական կազմին պատկանող անձինք.

ը) պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ, վորոնք դասված են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին:

Մանրություն.— «բ» և «գ» կետերում թվարկված զինվորականներն իրենց արտոնու-

թյունը պահպանում են այն դեպքում, յեթե նրանք ստացել են յերկարատե արձակուրդ, դառնվում են պահեստում, կամ բոլորովին ազատվել են ծառայությունից՝ 1934 թ. հունվարի մեկից հետո:

40. Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են սահմանված ուսման և հավաքի համար կանչված պահեստի զինվորական ծառայողներ և զինապարտներ, հարկի այն մասը, վորի մոծեելու ժամկետը զուգադիպում է ուսման կամ հավաքի ժամկետին, հետաձգվում է նրանց վերադառնալուց միամիս ժամանակով:

41. Տարերային աղետներից տուժած տնտեսությունները չըջանային հարկային հանձնաժողովների կողմից ազատվում են հարկից ամբողջովին կամ մասամբ՝ նայած տնտեսության կրած վնասի չափին, կամ տնտեսության կարողությանը:

42. Հարկից բոլորովին ազատվում են դյուղական այն ակտիվիստների ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրեժխնդրությունից՝ դյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային սեփականության պաշտպանության համար մղվող պայքարում:

43. Հարկից լիովին ազատվում են անտառի այն աշխատողների ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքը պահպանելու, իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ կամ այդ կապակցությամբ:

44. Բացի փերոհիշյալ բոլոր արտոնություններից, կոտնտեսականներին արտոնություններ են տրվում նաև 70, 71, 73, 74, 75, 76, 77, 78, 86, 87, 88 և 89 հոդվածների կարգով:

Գ. ԿՈՏՏԵՍ ԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ Կ ՀԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

45. Կոտնտեսականների դյուղհարկի վճարման

Համար ըստ առանձին շրջանների սահմանվում են հետևյալ ժամկետները.—

ա) Լենինականի, Արթիկի, Թալինի, Դիլիջանի, Իջևանի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Քեչիզքենդի, Ստեփանավանի, Ղարաբաղի, Շամշադինի, Ալազանի, Աղբաբայի և Մեղրու շրջաններին, Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիի ընդհանուր մասի համար:

1-ին ժամկետը—մինչև 1934 թ. սեպտեմբերի 15-ը, պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

2-րդ ժամկետը—մինչև 1934 թ. հոկտեմբերի 15-ը, պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

3-րդ ժամկետը—մինչև 1934 թ. նոյեմբերի 15-ը, պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

Ղամաբլիի, Ղուրդուղուլու շրջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղարշապատի և Վեդիի դաշտային մասերի համար՝

Առաջին ժամկետը—մինչև 1934 թվի սեպտեմբերի 15-ը, պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

Յերկրորդ ժամկետ՝ մինչև 1934 թ. հոկտեմբերի 15-ը պետք է դանձվի 50 տոկոսը:

Յերրորդ ժամկետը— մինչև 1934 թվի նոյեմբերի 15-ը դանձվի հարկի 25 տոկոսը:

46. Ամեն մի շրջանի համար սահմանված ժամկետներն անպայման հրապարակվում են ի դիտություն բոլորին, հայտարարվում են գյուղական ժողովներում, մտցվում են հարկի ծանուցադրերում և հարկման ամբողջ տարվա ընթացքում չեն փոխվում:

Հ ա տ վ ա ծ IV ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՄՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յուրաքանչյուր անհատական աշխատավորական տնտեսություն հարկը հաշվվում է հետևյալ աղբյուրներից ստացվող յեկամտից՝

ա) դաշտագործությունից (հատիկային մշակությամբ, կարտոֆիլից, չալթուկից, ցանովի խոտաբույսերից և այլն):

բ) մարգագետիններից:

գ) ամեն տեսակ անասուններից, բացի խոզերից:

դ) գյուղատնտեսության հետևյալ հատուկ ճյուղերից՝ բանջարագործությունից, բոստաններից, այգեգործությունից, խաղողագործությունից, ծխախոտագործությունից և թթանոցներից:

յե) տնայնագործական, արհեստավորական դրաղմունքներից և վոչ գյուղատնտեսական մյուս վաստակներից, բացի աշխատավարձը, վորը յենթարկվում է յեկամտահարկի, ըստ աշխատանքի վայրի:

Ծանոթություն 1.— Վորսորդության յեկամունները գյուղատնտեսական հարկի յեն յենթարկվում միմիայն այն շրջաններում, վորտեղ այդ դրաղմունքն արդյունաբերական դարգացում է ստացել:

Ծանոթություն 2.— Ձկնորսության յեկամունները գյուղատնտեսական հարկի յեն յենթարկվում միմիայն այն տնտեսություններում, վորոնք իրենց վորսած ձուկը կոտրակտացիայով չեն հանձնում պետական ձկնորսական, ար-

դյունաբերական ձեռնարկություններին կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

48. Գյուղհարկի յենթակա չեն չեղամապահության թոշնաբուծության, ճաղարարության, խողարության և մեղվաբուծության յեկամուտները:

Ծանոթութիւն.— 1. Թխվանոցների յեկամուտները յենթակա յեն հարկի միայն այն տնտեսություններում, վորոնք չեղամապահությամբ չեն դրադվում և թխանոցներն այլ նպատակների համար են ոգտագործում:

Ծանոթութիւն.— 2.— Շաֆրանի և կառուցուկների ցանքերը ևս ազատվում են գյուղհարկից:

49. Գյուղատնտեսական հարկի յենթակա յեկամուտների աղբյուրներն այլ հարկի յենթակա չեն, բացի՝

ա) արհեստագործական հարկից, վորը գանձվում է շրջանառության տոկոսներով հարկվող դրադմունքներից.

բ) ջրային տուրքից՝ վորոգվող հողագործության շրջաններում.

գ) արհեստագործական ձկնորսության իրավունքի համար գանձվող տոմսային տուրքից:

Այն հողամասերից, վորոնց յեկամուտը յենթակա յե գյուղատնտեսական հարկի, ինչպես և չենքերով բռնված այն հողամասերից, վորոնք անմիջականորեն կապված են գյուղատնտեսական ոգտագործման հետ, հողային ռենտա չի գանձվում:

Այն չենքերը, վորոնք մտնում են գյուղատնտեսական հարկի յենթակա տնտեսությունների մեջ, ազատվում են չենքերի տեղական հարկից:

50. Այն անձինք, վորոնք գյուղատնտեսությամբ են դրադվում քաղաքային հողերում, պետք է իրենց յեկամուտներից վճարեն կամ գյուղատնտեսական հարկ, կամ յեկամտային հարկ:

ՀԱՅ ԲՈՂՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎՃԱՐԵՐՈՒՄ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՈՒՏԱԿԱՆ ՍԵՐՅԱՄԲ ՊԵՐԱՊՈՂ ԱՆՃԻՆԸ յԵՆԹԱԿԱ յԵՆ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ: ՅԵՐԵԱՆ, ԼԵՆԻՆԱԿԱՆ ԵՎ ՂԱՐԱՔԻՍԻՍԱ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ յԵՆ յԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՄԻԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՈՒՏԱԿԱՆ ՍԵՐՅԱՄԲ ՊԵՐԱՊՈՂ ԿՈՒՂԱԿԱՅԻՆ ՏՆՈՒՏԱԿԱՆ ՍԵՐՅԱՄԲ:

Ծանոթութիւն.— Քաղաքներում և քաղաքային ավաններում, այն տնտեսությունները, վորոնք գյուղատնտեսական հարկ են վճարում միմիայն գյուղատնտեսության յեկամուտների համար, չեն ազատվում չենքերով բռնված հողամասերի հողային ռենտայից և չենքերի տեղական հարկից, յեթե այդ չենքերն ոգտագործվում են վորչ-հողագործական յեկամուտ ստանալու համար:

51. Այս վորոշման նախորդ հոդվածի թված քաղաքներում (ՅԵՐԵԱՆ, ԼԵՆԻՆԱԿԱՆ, ՂԱՐԱՔԻՍԻՍԱ) ապրող քաղաքացիները գյուղհարկ են վճարում ընդհանուր հիմունքներով քաղաքից դուրս ռենեցած գյուղատնտեսության յեկամուտների համեմատ:

Քաղաքներում նրանց ստացած յեկամուտների համար նրանք յենթարկվում են յեկամտային և այլ հարկերի, ամբողջ քաղաքային ազգաբնակչության հետ հավասար:

Բ. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄԱՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՅԵԿԱՄԱՍԻՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

52. Դաշամշակությունից, մարգագետիններից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, բոստաններից, պարտիզպանությունից, այգիներից, ծխախոտագործությունից և այլ հատուկ ճյուղերից աշխատավոր մենատնտեսների ստացած յեկամուտը վորոշվում է ըստ յեկամտաբերության նորմաների:

53. Յեկամտի թված աղբյուրների համար սահմանվում են յեկամտաբերության հետևյալ նորմաներն ըստ առանձին շրջանների՝

Տես աղյուսակ № 2

Շրջանի սահմաններում առանձին մշակույթները, պղալի չափով տարբեր յեկամտաբերություն ունենալու դեպքում, շրջանային գործադիր կոմիտեները կարող են յեկամտաբերության տարբեր նորմաներ սահմանել առանձին գյուղխորհուրդների և գյուղերի համար:

55. Զանազան շրջանների սահմանակից գյուղերի յեկամտաբերության նորմաների խոչըր տարբերությունից խուսափելու նպատակով (յեթե այդ տարբերությունները չեն բղխում տնտեսական առանձնահատուկ պայմաններից), շրջանային գործադիր կոմիտեները պարտավոր են նորմաներն ըստ գյուղերի վորոշելուց առաջ համաձայնեցնել հարևան շրջանների գործկոմների հետ:

ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ, ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂԵՐԻ ՅԵ-ԿԱՄՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

56. Դաշտամշակության, բանջարաբուծության, բոստանների, խաղողի այգիների, մրգատու պարտեզների և ծխախոտագործության հարկման յենթակա յեկամուտը վորոշվում է՝

ա) աշնանացան ու դարնանացան մշակույթների ցանքի այն տարածության համաձայն, վորը սահմանված է տվյալ տնտեսության համար, 1933 թ. աշնան և 1934 թ. դարնան պլանով:

բ) խոտհարքների և բաղմամյա տունկերի (մրգատու պարտեզներ, խաղողի այգիներ և այլն) փաստական տարածության համաձայն:

Աշնանացան ու դարնանացան մշակույթների սահ-

մանված պլանից դուրս ցանված տարածությունը հարկի չի յենթարկվում:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՏՎԱԾ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

57. Անասուններից ստացվող յեկամուտը վորոշելիս, հաշվի յեն առնվում՝

ա) չորս տարեկանից մեծ ձիերը, կովերը, գոմեշները, եղերը, ջորիները և ուղտերը:

բ) կովերը, առաջին ծնից հետո, և յերեք տարեկանից մեծ յերինջները:

գ) յերեք տարեկանից մեծ ցուերը:

դ) ձմեռած վոչխարները և այծերը:

Անասունների տարիքը վորոշվում է առ մեկը մայիսի 1934 թ.:

ՎՈՇ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

58. Վոշ գյուղատնտեսական փաստակը հաշվվում է 1933 թ. հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 1-ը:

59. Յուրաքանչյուր տնտեսության վոշ գյուղատնտեսական յեկամտի չափը յուրաքանչյուր տնտեսության համար վորոշում են գյուղխորհուրդները և հաստատում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Այդ դեպքում ընդհանուր յեկամտից հանվում են դբաղմուռքի հետ կապված հիմնական արտադրական ծախսերը (հումքի, կիսաֆաբրիկատների, վառելանյութերի և այլ ծախսերը): Այդպիսով վորոշված յեկամուտը միացվում է տնտեսության հարկի յենթակա յեկամտին 30 տոկոսի չափով:

Կոոպերացված տնայնագործների ու արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են իրենց արտադրանքն արտելին հանձնելուց, չեն յենթարկվում գյուղատնտեսական հարկի, այլ յենթարկ-

վում են յեկամտային հարկի, այն կարգով, վորը սահմանված է աշխատավարձի համար: Իսկ կոոպերացված տնայնագործների և արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են իրենց արտադրանքը արտելից դուրս վաճառելուց, միացվում են տնտեսության, գյուղատնտեսական հարկին յենթակա յեկամտին՝ չկոոպերացված տնայնագործների յեկամուտներին հետ հավասար հիմունքներով:

60. Արդելիված է անհատական կարգով հարկի յենթարկել (յեթե չկան այլ այնպիսի նշաններ, վորոնք հիմք են տալիս տնտեսությունը կուլակային տնտեսությունների կարգը դասելու) այն տնայնագործներին ու արհեստավորներին,

ա) վորոնք իրենց զբաղմունքի ասպարիդում վարձու աշխատանք են գործադրում, այն դեպքում, յերբ զրանով նրանք չեն զրկվում ընտրական իրավունքներէից:

բ) վորոնք իրենց զբաղմունքի ասպարիդում գործադրում են մեխանիկական շարժիչներ, բացի աղացները, ձիթհան գործարանները, բուրդզգանները, այն դեպքում, յերբ զբաղմունքը կատարվում է առանց վարձու աշխատանքի:

ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐԳՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒՑ ՍՏԱՅԱԾ ՅԵԿԱՄՏԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

61. Շուկայի գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց, աշխատավոր մենատնտեսի ստացած յեկամուտը հաշվի յե առնվում 1933 թ. գյուղատնտեսական հարկի հաշվառումից, մինչև 1934 թ. հաշվառումը գոյացած գումարի չափով:

Այդ յեկամուտը միացվում է հարկի յենթակա յեկամտին, այնպիսի դումարով, վորը չպետք է գերազանցի տնտեսության հարկի յենթակա մյուս յեկամուտների (գյուղատնտեսության յեկամտի և վոչ գյուղատնտեսական վաստակի) 30 տոկոսից:

Շուկայի գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց աշխատավոր մենատնտեսի ստացած յեկամուտը հարկման յենթարկելու վերաբերյալ կարգը կիրառվում է ՀԽՍՀ սահմաններում ամենուրեք, առանց փոփոխության:

62. Հացահատիկը և գյուղատնտեսական այլ մթերքները կոոպերացիային վաճառելուց ստացած յեկամուտները հարկի չեն յենթարկվում:

63. Շուկայի գներով, գյուղատնտեսական մթերքները վաճառելուց տնտեսության ստացած յեկամտի չափը վորոշում է գյուղխորհուրդը և հաստատում է շեջնային հարկային հանձնաժողովը:

Գ. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

64. Աշխատավոր մենատնտեսների հարկը հաշվարկվում է զրույթների հետևյալ աղյուսակով՝

Հարկի յենթակա յեկամտի չափը մի տնտեսության համար	Հարկի չափը մի տնտես համար
1. Մինչև 200 ռուբլի	25 ռ. (կայուն գրույթ)
2. 200 ռուբ. ավելի մինչ 300 ռուբլի	25 ռ. + 5 կ. 200 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3. 300 ռուբ. մինչ 400 ռ.	30 ռ. + 15 կ. 300 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4. 400-ից մինչև 500 ռ.	45 ռ. + 20 կ. 400 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
5. 500-ից մինչև 700 ռ.	65 ռ. + 30 կ. 500 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6. 700 ռուբլուց ավելի	125 ռ. + 35 կ. 700 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

65. Այն դեպքերում, յերբ տվյալ վայրում կողմնատեսականների համար սահմանված դրույքը 25 օուբլուց ավելի չէ, աշխատավոր մենատնտեսների հարկի չափը չի կարող այդ դրույքից պակաս լինել:

66. Այն տնտեսությունները, վորոնց կազմում կա 2-ից վոչ ավելի աշխատունակ անդամ, ընտանիքի անաշխատունակ անդամների համար հաշվարկված հարկից զեղչ են ստանում հետևյալ չափով՝ յերեք անաշխատունակ անդամ ունեցողները 20 տոկոս, չորս և ավելի անաշխատունակ անդամ ունեցողները՝ 30 տոկոս:

67. Այն տնտեսությունները, վորոնք չարամտորեն չեն կատարում ցանքի համար նրանց տրված պլանները և պետությանը պարտադիր կարգով գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու պլանները, գյուղատնտեսական հարկի յեն յենթարկվում ընդհանուր հիմունքներով, իսկ նրանցից դանձվելիք հարկի դումարը կրկնապատկվում է:

Այդ տնտեսությունները գյուղատնտեսական հարկի բնագավառում վոչ մի արտոնություն չեն վայելում (ներառյալ նաև 66 հոդվածով տրվող զեղչը): Այդ տնտեսությունների ցուցակը հաստատում են շրջանային գործադիր կոմիտեները:

Դ. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱՆՉՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՎԱՎԱԶՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

68. Գյուղխորհուրդները կարող են ամբողջովին կամ մասամբ ազատել հարկից առանձին սակավադր անտեսությունները: Այդ դեպքում պետք է հատուկ քաղաքություն դարձնել կարմիր բանակայինների, ինչպես և նախկին կարմիր գվարդիականների և կար-

միր պարտիզանների տնտեսությունները հարկից ազատելու վրա: Այն տնտեսությունների ցուցակը, վորոնք ամբողջովին կամ մասամբ սակավադրության պատճառով պետք է ազատվեն հարկից, ներկայացվում է շրջանային հարկային հանձնաժողովին ի հաստատություն:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՒՆՆԵՐԻՆ

69. Գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում այն բանվորներն ու ծառայողները, վորոնք գյուղատնտեսությամբ են պարապում տնամերձ հողամասում և ունեն միայն մի կով, մանր անասուն, խոտհարք, բայց չունեն դաշտային հող ու լճկան անասուն, յեթե նրանց համար աշխատավարձը յեկամտի հիմնական աղբյուր է:

Այն հողամասերը, վորոնք հատկացվում են բանվորներին ու ծառայողներին՝ բանջարանոցների և գետնախնձոր տնկելու համար, նույնպես չեն յենթարկվում գյուղատնտեսական հարկի:

70. Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք առնվազն մի տարով կոնտրակտացիա յեն կնքել կամ իրենց ամբացրել են ամխարգյունարեության ասպարիղում ստորերկրյա աշխատանք կատարելու համար:

Իրենց պարտականությունները չկատարելու դեպքում, նրանց տնտեսություններից հարկ է վերցվում ընդհանուր հիմունքներով:

71. Հարկից ազատվում են յերկաթուղային, ջրային, խճուղային ու գրունտային տրանսպորտի գծային աշխատողների այն յեկամուտները, վորոնք ստացվում են տրանսպորտին հատկացված հողերում գտնվող գյուղատնտեսության բոլոր տեսակներից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԱՇԽԱՏՈՂ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ

72. Այն աշխատավոր մենատնտեսների տնտեսութունները, վորոնք 1934 թ. առնվազն գյուղատնտեսական մի սեզոնի համար մշտական աշխատանքի յենանցնում խորհրդատեսութունները՝ աշխատանքային պայմանագրերի հիման վրա (ԽՍՀՄ-ի Ժողովրդային 1934 թ. մարտի 26-ի վորոշումը: ԽՍՀՄ-ի Որենքների Ժողովածու, 1934 թ., № 17, հոդված 133), ազատվում են գյուղատնտեսական հարկից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ ՅԵՎ
ԽՈՏԱՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

73. Շաքարի ճակնդեղի ցանքերը լիովին ազատվում են հարկից:

74. Հարկից լիովին ազատվում են կանեփի կոնտրակտացիայի յենթարկված ցանքերը, ինչպես և թեկատու վուշի այն բոլոր ցանքերը, վորոնք կատարվել են առվույտից հետո, աշնանավար խամ հողերում: Վուշի մյուս ցանքերը հարկի յեն յենթարկվում արտոնյալ նորմայով, այն ե՝ հացաբույսերի նորմայով:

75. Հարկից լիովին ազատվում են՝

ա) բամբակի այն ցանքերը, վորոնք կատարվել են նոր շրջաններում (Ուկրայնա, Հյուսիսային Կովկաս, Ազով-Սևծովյան յերկիր, Դաղստան, Ղրիմ և Ստալինգրադի յերկիր):

բ) վոռոգվող հողագործության բոլոր շրջանների հիմնովորդ հողերում կատարված բամբակի ցանքերը:

Բամբակի մյուս ցանքերը հարկի յեն յենթարկվում արտոնյալ նորմայով, այն ե՝ հացաբույսերի նորմայով:

76. Հարկից լիովին ազատվում են ցիտրուսային

տունկերը, քենդիրի, կանեփի, ռամիի, կանատնիկի, պերլլի, գենագերչակի, լյուֆայի ցանքերը, ինչպես և արդյունաբերության համար կոնտրակտացիայի յենթարկված ցանքերը՝ այդ մշակույթի համար նոր շրջաններում, վորոնք ցանկը կադմում ե ԽՍՀՄ-ի Ֆին-ժողովրդատը, համաձայնեցնելով ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատի հետ, և դայլուկի, յեթեբատու, յուղատու, դեղատու-տեխնիկական բույսերի կոնտրակտացիայի յենթարկված տարածությունները:

77. Հարկից բոլորովին ազատվում են գնդածաղիկները այն ցանքերը, վորոնք կատարվել են աշնանավար հողամասում, յեթե իրագործվել են ագրոտեխնիկ կանոնները:

78. Հարկից բոլորովին ազատվում են առվույտի այն ցանքերը, վորոնք փաստորեն թողնվել են սերմացվի համար, ինչպես և լյուպինի ու այլ մշակույթների այն ցանքերը, վորոնք հերկվում են վորպես պարտանյութ:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԻՋՆԱԲՈՒԾՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

79. 1933 թ. հետ համեմատած տնտեսության մեջ ծնված բոլոր կովերը, ցուլերն ու վոչխարներն ազատվում են հարկից:

80. Հարկից ազատվում են կարակուլ ցեղի վոչխարները և նրանց մետիսները (խառնուրդները):

81. Գյուղատնտեսական հարկից բոլորովին ազատվում են խոզերը, թռչունները և ճագարները:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,
ՎՈՐՈՆՑ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ-
ՆԵՐԸ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ, ՊԱՏ-
ՎԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՀԵՐՈՍՆԵՐԸ, ՆԱԽԿԻՆ ԿԱՐՄԻՐ ԳՎԱՐԳԻԱԿԱՆՆԵՐԸ
ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐԸ, ՌԱԶՄԱԿԱՆԱՅՎԱԾ
ՊԱՀԱԿՈՒՄ, ՄԻԼԻՑԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՈՒՂՂԻՉ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ,
ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԸ

82. Արտոնություններ են տրվում այն տնտեսու-
թյուններին, վորոնց կազմի մեջ մտնում են՝
ա) խորհրդային Միության հերոսները, խորհրդա-
յին Միության պատվանշաններով կամ պատվավոր հե-
ղափոխական զենքով պարգևատրվածները և աշխա-
տանքի հերոսները.

բ) կազդային, շարային և կրտսեր պետկազմի ժամ-
կետային (անընդհատ) կամ դերժամկետային ծառա-
յության մեջ գտնվող զինվորականները, հաշված նաև
1934 թ. աշնանը զորակոչվածները.

գ) բանվորա-գյուղացիական կարմիր բանակի մի-
ջին, ավագ և բարձր պետկազմի կազդային ու ռեզեր-
վում գտնվող զինվորականները.

դ) ստորին հրամկազմի այն զինվորականները,
վորոնք յերկարատև արձակուրդից փոխադրվել են տե-
րիտորիալ զորամասերի փոփոխական կազմը.

յե) Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի յեր-
կարատև արձակուրդում, պահեստում և տերիտորիալ
մասերի փոփոխական կազմում գտնվող միջին, ավագ
և բարձր պետկազմի այն անձինք, վորոնք պարապում
են աշխատավորների ռազմական պատրաստությամբ,
վորպես ՊԱՋԸ-Ավիաքիմի հաստիքային աշխատողներ:

զ) նախկին կարմիր զվարդիականները և կարմիր
պարտիզանները.

ե) պետական հատուկ նշանակութուն ունեցող
ձեռնարկություններին ու կառուցվածքների ռազմակա-

նացված պահակի և ռազմականացված հրչեջ պահակի
շարային ու վարչական-տնտեսական կազմին պատկա-
նող անձինք, Բանվորա-գյուղացիական Միլիցիայի ու
պերատիվ շարային և վարչական-տնտեսական կազ-
մին պատկանող անձինք, ինչպես և ուղղիչ աշխատան-
քային հիմնարկների ու պերատիվ և վարչական-տնտե-
սական կազմին պատկանող անձինք.

ը) պատերազմի ու աշխատանքի այն հաշմանդամ-
ները, վորոնք դասված են հաշմանդամության առա-
ջին, յերկրորդ և յերրորդ խմբերը:

Վերև թվարկված տնտեսությունները հաշված
հարկից ստանում են 20 ռուբլի զեղչ, յեթե տնտեսու-
թյան մեջ կան աշխատունակ այլ տղամարդիկ և 30
ռուբլի զեղչ, յեթե տնտեսության մեջ չկա այլ աշխա-
տունակ տղամարդ:

Յեթե տնտեսության մեջ կան սույն հոդվածում
թվարկված կատեգորիաներին պատկանող մի քանի
անձինք, ապա արտոնությունը տրվում է ամեն մի
անձին առանձին:

Ծանոթություն. — «բ» և «գ» կետերում թը-
վարկված զինվորականներն արտոնության իրա-
վունք են պահպանում այն դեպքում, յերբ նը-
րանք յերկարատև արձակուրդ են ստացել, փո-
խադրվել են պահեստի կամ բոլորովին ազատ-
վել են ծառայությունից 1934 թ. հունվարի մե-
կից հետո:

83. Այն տնտեսություններին համար, վորոնց կազ-
մի մեջ մտնում են այնպիսի զինվորականներ և պա-
հեստի զինապարտներ, վորոնք կանչվել են նրանց հա-
մար սահմանված ուսման և հավաքին, հարկի այն մա-
սի մուծումը, վորը վճարելու ժամկետն ընկնում է
ուսման կամ հավաքի ժամանակին, հետաձգվում է մի
ամսով, հաշված նրա վերադառնալուց՝ մինչև մի ա-
միս ժամանակով:

84. Յեթե տնտեսության կազմի մեջ մտնում են

տերիտորիալ զորամասերի փոփոխական կազմի այն ղեկավարականները, վորոնք իրենց ծառայությունն առաջին տարին կանչվել են յերեք ամսվա ուսման կամ ուսումնական հավաքի՝ սեփական շարային ձիերով, ապա այդ ձիերն ազատվում են հարկից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԲՆԱԿՆԵՐԻՆ

85. Անհատական այն տնտեսություններին, վորոնք մինչև 1930 թ. ապրիլի մեկը վերաբնակվել են պլանային կարգով, տրվում են հետևյալ արտոնությունները.

ա) այն տնտեսությունները, վորոնք վերաբնակվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է ազատել հողամասերը ծառերից և կատարել այլ մելիորատիվ աշխատանքները՝ կուլտուրական հող պատրաստելու համար, հարկից ազատվում են հինգ տարի ժամանակով.

բ) այն տնտեսությունները, վորոնք վերաբնակվել են Հեռավոր Արևելքում, Կարելիայում և Մուրմանի շրջանում, հարկից ազատվում են տասը տարի ժամանակով:

Այն մենատնտեսները, վորոնք պլանային կարգով վերաբնակվել են 1930 թ. ապրիլի մեկից հետո, արտոնություններ են ստանում այն հատուկ վորոշումների հիման վրա, վորոնք հրատարակում է ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից համամիութենական վերաբնակեցման Կոմիտեն՝ ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիտեի և Կառավարության հետ միասին:

ԱՅՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

87. Հարկից ազատվում են այն յեկամուտները, վորոնք ստացվում են անտառամշակման ասպարիզում (անտառամշակում, փայտեղենի փոխադրում, փայտեղենի արտահանում և այլն) և տորֆի մշակման ասպարիզում:

88. Վոսիու և պլատինի հանքեր վորոնող անձանց վաստակները ազատվում են հարկից: Իրենց ձիերով այդ աշխատանքը կատարող տեղական գյուղացիների տնտեսություններն ազատվում են հարկից:

89. Հարկից ազատվում է այն յեկամուտը, վոր ստացվում է՝

ա) սուսկերից, ամեն տեսակ վայրի պտուղներից (սերմնավոր ու կորկավոր, յեղեմնակաղնուց ու հաճարից, շագանակից, վայրի կաղնուց, ինչպես և վայրի հատապտուղներից).

բ) ուտիլ հումուլից և մետաղի լոմից.

գ) խեժից:

Այդ արտոնությունը տրվում է, յեթե հավաքված ամբողջությամբ անպայման հանձնվում է պետական կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

90. Այն տնտեսությունները, վորոնք տուժել են տարերային աղետներից, շրջանային հարկային հանձնաժողովների կողմից ազատվում են հարկից, բոլորովին կամ մասամբ՝ նայած տնտեսության կրած վնասի չափին և տնտեսության կարողությունը:

91. Հարկից բոլորովին ազատվում են գյուղական այն ակտիվիստները ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրեժխնդրությունից՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման համար և հանրային սեփականության պաշտպանության համար մղվող պայքարում:

92. Հարկից բոլորովին ազատվում են անտառի այն աշխատողների ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքը պահպանելու իրենց պաշտոնական պարտավորությունները կատարելիս, կամ այդ կապակցությամբ:

93. Այն անձանց տնտեսությունները, վորոնք ստանձնել են վորբերի և նրանց գույքի խնամակալությունն ու հողաբարձությունը՝ խնամակալությունը կամ հողաբարձությունը հաստատելուց յերեք տարի

Ժամանակով ազատվում են այն հողամասերի հարկից, վորոնք հատկացված են խնամյալներին և այն անասուններից, վորոնք պատկանում են խնամյալներին:

Այս արտոնությունները տրվում են միմիայն այն դեպքում, յերբ խնամակալները կամ հոգաբարձուներըն ապրում են վորբերի հետ միասին և նրանց տնտեսությունը վարվում է միասին:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

94. Աշխատավոր մենատնտեսները հարկը վճարում են այն ժամկետներին, վորոնք սահմանված են կոտնտեսականների համար (45 և 46 հոդվածները):

Հ ա տ վ ա ծ V ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

95. Բոլոր կուլակային տնտեսությունները հարկվում են նրանց իրական յեկամուտների համաձայն, անհատական կարգով և վոչ նորմաներով և վոչ մի արտոնություն չեն վայելում:

Շրջանային գործադիր կոմիտեները պարտավոր են ապահովել ցոլոր կուլակային տնտեսությունների յրիվ հայտնաբերումը և նրանց հարկի ժամանակին գանձումը, թույլ չտալով վորպեսզի աշխատավոր տնտեսություններն անհատական կարգով հարկվեն:

96. Տնտեսությունները կուլակային են համարվում և անհատական կարգով հարկման յենթարկվում հետևյալ հատկանիշներից վորեւն մեկի առկայությամբ:

ա) Յեթե տնտեսությունը սխտեմատիկորեն զբաղ

վում է չարաչափությամբ (սպեկուլյացիայով—գնումներ վաճառք) և այդ միջոցով հարստանում է բանվորների ու գյուղացիների հաշվին:

բ) Յեթե տնտեսությունը ստրկացուցիչ պայմաններով փող կամ մթերքներ է տալիս փոխարինաբար, պարտավորեցնելով փոխառուին վերադարձնել պարտքը փողով, բնանյութով, հումքով կամ անձնական աշխատանքով և այլն (վաշխառություն):

գ) Յեթե տնտեսությունը սխտեմատիկորեն վարձու աշխատանք է կիրառում գյուղատնտեսական աշխատանքներում կամ տնայնագործության մեջ և ձեռնարկություններում, բացառությամբ այն դեպքերի, յերբ վարձու աշխատանքի կիրառումը բղխում է գյուղատնտեսական դանադան մշակույթների առանձնահատկությունից կամ զբաղմունքի բնույթից և չի դերադանցում բանվորական ուժ վարձելու առավելագույն չափից:

Բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը, վորն անհատական կարգով հարկելու հիմք չի ծառայում, բոլոր շրջանների համար սահմանվում է հետևյալ քանակությամբ.

- 1) Հացահատիկային տնտեսությունների համար մինչև 50 վարձու աշխատանքային ուր:
- 2) Ողողադործական տնտեսությունների համար մինչև 125 վարձու աշխատանքային ուր:
- 3) Այգեգործական տնտեսությունների համար մինչև 75 վարձու աշխատանքային ուր:
- 4) Բանջարաբուծական կամ չալթուկագործական տնտեսությունների համար մինչև 100 վարձու աշխատանքային ուր:
- 5) Ծխախոտագործական տնտեսությունների համար մինչև 240 վարձու աշխատանքային ուր:
- 6) Բամբակագործական տնտեսությունների համար մինչև 150 վարձու աշխատանքային ուր:

7) Անասնապահական տնտեսությունների համար մեկ հովիվ կամ մեկ հոտաղ:

8) Արգելվում է անհատական կարգով հարկի յենթարկել տնայնագործներին և արհեստավորներին, յեթե չկան նրանց կուլակների շարքը դասելու ուրիշ հատկանիշներ հետևյալ դեպքերում:

ա) Յեթե արհեստի մեջ կիրառվում է վարձու աշխատանք և բանվորի կամ աշխատողի առկայությունը հիմք չի ծառայում ընտրական իրավունքներից զրկելու համար:

բ) Յեթե արհեստներում գործադրում են մեքենայական շարժիչներ (բացի «գ» կետում մատնանշված ձեռնարկություններից), և այդ արհեստով զբաղվում են առանց վարձու աշխատանքի (60-րդ հոդ.):

Ծանոթություն.— 1.— Վորերի, ալրինների, հալմանդամների և սովորողների տնտեսություններում, վորտեղ չկան աշխատունակ տղամարդիկ կամ աշխատունակ տղամարդիկ ծանր հիվանդ են, գտնվում են կարմիր բանակում, հանքագործներ են, կամ բանվորներ են և բացակայում են տնտեսությունից, շինարարական աշխատանքների վրա աշխատելու պատճառով, մեկ մշտական վարձու բանվորի և սահմանված սեզոնային բանվորների որերի թվից վոչ ավելի աշխատանքի կիրառումը հատկանիշ չի ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար: Նույն տնտեսություններում մեկ վարձու բանվորի բանվորական որերից և սահմանված թվով սեզոնային բանվորների որերից վոչ ավելի աշխատանք կիրառելը ևս հատկանիշ չի ծառայում անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթություն.— 2.— Յեթե անասնապահական տնտեսությունն ունի մեկ մշտական հովիվ կամ հոտաղ և միաժամանակ ոգտագործում է սեզոնային 35 աշխատանքային որից ավելի, ապա

այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթություն.— 3.— Յեթե տնտեսությունը խառն մշակույթի բնույթ ունի, ապա բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը սահմանվում է տնտեսություն հիմնական գյուղատնտեսական ճյուղի համար նախատեսված բանվորական որերի քանակի համեմատ:

գ) Յեթե տնտեսությունն ունի աղաց, ձիթհանք, գինեգ, նորմայով աշխատող ողու գործարան, կորեկաղաց, զգարան, կարտոֆիլի, սլոուլների և բանջարեղենի չորանոց, կամ այլ արդյունաբերական ձեռնարկություն, այն դեպքում, յերբ այդ ձեռնարկությունում մեքենայական շարժիչ է գործադրվում:

դ) Յեթե տնտեսությունն ունի նախորդ կետում թված ձեռնարկություններից մեկը, վորն աշխատում է քամու կամ ջրի ուժով, այն դեպքում, յերբ ձեռնարկության տարեկան յեկամուտը 150 ո. ավելի յե, իսկ ջրաղացինը 200 ո. ավելի յե: Այդ դեպքերի չափով յեկամուտ ունեցող քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները հիմք են ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար, յերբ տնտեսության ընդհանուր յեկամուտը (գյուղատնտեսությունից և վոչ-գյուղատնտեսությունից) 700 ո. ավելի յե:

Ծանոթություն.— 1.— Նորմայով աշխատող ողու գործարանները հատկանիշ են ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար նույնպես այն դեպքերում, յերբ տնտեսությունն ողի քաշելու և վաճառելու նպատակով հոմք է գնում, անկախ նրանից՝ գործադրվում է մեքենայական շարժիչ, թե վոչ, յեթե նրա տարեկան յեկամուտը բոլոր աղբյուրներից 700 ո. պակաս չե, իսկ ողու գործարանի յեկամուտը 150 ուղբուց ավելի յե:

Ծանոթութիւն.—2.—Այն դեպքում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկութիւնը պատկանում է մի քանի տնտեսութիւններին (համատեբերին), ուրիշ հատկանիշների բացակայութեան դեպքում, անհատական կարգով հարկվում են այն տնտեսութիւնները, վորոնք իրենց պատկանող ձեռնարկութեան մասից տարեկան 150 ռ. ավելի յեկամուտ են ստանում, իսկ ջրաղացից 200 ռ. ավելի յեկամուտ:

յե) Յեթե տնտեսութիւնն ունի արդիւնաբերական այնպիսի ձեռնարկութիւն կամ դրադուռնք, վորի միջոցով շահագործում է շրջակա բնակչութիւնը՝ աշխատանքներ հանձնելով տներում կատարելու համար, կամ այդ ձեռնարկութիւնն ու սարքավորումը վարձով է տալիս ստրկացուցիչ պայմաններով, շահագործում է բնակչութեանը, գյուղատնտեսական մթերքներ այդ ձեռնարկութիւններում վերամշակելու միջոցով:

զ) Յեթե տնտեսութիւնը մյուս տնտեսութեան համար ստրկացուցիչ պայմաններով վարձակալում կամ վարձով է տալիս այգիներ, խաղողի այգիներ, խոտհարքներ և այլ գյուղատնտեսական հողամասեր:

ե) Յեթե տնտեսութիւնը վարձով է տալիս մեքենայական շարժիչ ունեցող բարդ գյուղատնտեսական մեքենաներ, կամ այդ մեքենաները վարձով աշխատեցնում է ուրիշ տնտեսութիւններին համար:

ը) Յեթե տնտեսութիւնը սխտեմատիկաբար վարձով է տալիս սարքավորված առանձին շենքեր բնակութեան կամ ձեռնարկութեան համար այն դեպքում, յերբ շենքերից ստացած տարեկան յեկամուտը 300 ռ. ավելի յե:

Ամառանոցային վայրերում և Յերևան, Լենինական ու Ղարաբախի քաղաքներում տնտեսութիւնները համարվում են կուլակային և հարկվում են անհատական կարգով, յեթե նրանց ընդհանուր յեկա-

մուտը 700 ռ. ավելի յե, իսկ շենքերը վարձով տալու յեկամուտը 500 ռ. ավելի յե:

Ծանոթութիւն.—1.— Ամառանոցային վայրեր են համարում Դիլիջանը, Ստեփանավանը, Ծաղկաձորը, Ալիբուլակը, Գորիսը, Ն. Բայազետը, Յելենովկան, Ախտան, Բյուրականը և Նիկիտինոն:

Ծանոթութիւն.—2.— Արգելվում է անհատական կարգով հարկի յենթարկել այն բանավորներին ու ծառայողներին, վորոնց հիմնական գրադմունքն աշխատանքն է կամ վարձու ծառայութիւնը, և վորոնք միաժամանակ ունեն փոքր գյուղական տնտեսութիւն, վորպես յեկամտի ու ժանդակ աղբյուր, և բացի դրանից սեփական շենքեր, վոր շահագործում են վարձու տալով:

Այդ բանավորները և ծառայողները հարկվում են ընդհանուր կարգով, վորպես աշխատավորական գյուղացիական տնտեսութիւններ, յեթե վարձով տված սարքավորված շենքի յեկամուտը 500 ռ. իսկ Յերևանում, Լենինականում և Ղարաբախի քաղաքում 750 ռ. ավելի չե:

թ) Յեթե տնտեսութեան անդամները պարագլուխ են առևտրով, առևտրական միջնորդութեամբ կամ ռեննայի անաշխատ յեկամուտներ, վորոնց թիւում և կրօնական պաշտամունքի ծառայողները, անկախ այդ աղբյուրներից ստացվող յեկամտի գումարից:

Յ7. Գյուղիտրհուրդները կազմում են անհատական կարգով հարկի յենթարկելիք տնտեսութիւնների ցուցակը և վորոշում են նրանց յեկամտի չափը: Այդ ցուցակները պետք է քննարկվեն կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ակտիվի ժողովներում:

Անհատական կարգով հարկի յենթարկվող տնտեսութիւնների ցուցակները և նրանց յեկամուտները վերջնականապես վորոշում են շրջանային գործադիր

կոմիտեները, վորոնք պարտավոր են տեղում ստուգել, թե ինչ չափով ճիշտ է անհատական հարկի յենթարկվել ամեն մի տնտեսութուն:

98. Անհատական կարգով հարկի յենթարկվելիք կուլակային տնտեսությունների յեկամուտները վորոշելիս, հաշվի յեն առնվում է հարկի յեն յենթարկվում գյուղատնտեսության բոլոր աղբյուրներից ստացվող յեկամուտները, ներառյալ նաև այնպիսի աղբյուրներից, վորոնք աշխատավոր տնտեսություններում հարկի չեն յենթարկվում (որինակ՝ խողարուծությունից, թռչնաբուծությունից և այլն) և վոչ գյուղատնտեսական վաստակի բոլոր տեսակներից:

Շուկայում վաճառվող մթերքներից ստացվող բոլոր յեկամուտները և վոչ-գյուղատնտեսական յեկամուտն ամբողջովին մտցվում են կուլակային տնտեսության հարկի յենթակա յեկամտի մեջ:

99. Անհատական կարգով հարկի յենթարկվող կուլակային տնտեսությունների հարկի չափը հաշվվում է գրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Յեկամտի չափը	Հարկի չափը
1000 ռուբ. ավելի մինչև 3000 ռուբլի	350 ռ. + 50 կ. 1000 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3000 ռ. մինչև 6000 ռուբ.	1350 ռ. + 60 կ. 3000 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6000 ռուբլուց ավելի	3150 ռ. + 70 կ. 6000 ռ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

100. Քաղաքային հողերում գյուղատնտեսությամբ պարապող կուլակը յենթակա յե գյուղատնտեսական հարկի:

101. Անհատական կարգով հարկված կուլակային

տնտեսություններն ամբողջ հարկը վճարում են մեկ ժամկետում, այն է 1934 թ. սեպտեմբերի մեկից վոչ ուշ:

102. Այսկուլակացված տնտեսությունները հարկի յեն յենթարկվում անհատական աշխատավորական տնտեսությունների հետ ընդհանուր հիմունքներով, բայց վոչ մի արտոնություն չեն վայելում (ներառյալ նաև 66-րդ հոդվածում մատնանշված դեղը):

103. Այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում են իրենց անցյալ գործունեության հիման վրա ընտրական իրավունքներից զրկված անձինք (նախկին ժանդարմներ, վոստիկաններ և այլն), յեթե նրանք վոչ մի նշան չունեն անհատական կարգով հարկի յենթարկվելու համար, հարկի ընապառուում վոչ մի արտոնություն չեն վայելում (ներառյալ նաև 66-րդ հոդվածում հիշատակված դեղը), իսկ դրանցից ընդհանուր հիմունքներով հասանելիք հարկի գումարը կրկնապատկվում է:

Հատված VI

ՀԱՐԿ ԳԱՆՁՈՂ ՈՐԳԱՆՆԵՐԸ, ԳԻՄՈՒՄՆԵՐ ՈՒ ԳԱՆԳԱՏՆԵՐ ՏՎԼՈՒ ՅԵՎ ՔՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

104. Ճիշտ և ժամանակին հարկը կիրառելու պատասխանատվությունը դրվում է շրջանային գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների վրա (իսկ համապատասխան դեպքերում՝ քաղխորհուրդների վրա):

105. Գյուղական վայրերում և քաղաքներում գյուղահարկի կիրառման, պարտականությունը դրվում

և շրջանային (քաղ) դ. ործադիր կոմիտեներէ, ինչպէս
և գյուղխորհուրդներէ վրա:

Քաղխորհուրդներին, շրջանային գործադիր Վո-
միսեներին և գյուղխորհուրդներին կից կազմակերպ-
վում են շրջ. (քաղ.) հարկային հանձնաժողովներ:

1. Շրջ. (քաղ.) գործկոմներին կից կազմակերպ-
վում են հարկային հանձնաժողովներ հետևյալ կազ-
մով՝

ա) Նախագահ—շրջանային գործադիր կոմիտեյի
նախագահը կամ նրա տեղակալը:

բ) Ֆինրաժնի վարիչը:

գ) Հողբաժնի վարիչը:

դ) ՄՏ կայանի քաղբաժնի ներկայացուցիչը:

յե) Պլանային մարմնի ներկայացուցիչը:

զ) Արհիտորհի ներկայացուցիչը:

ե) Տնայնագործական կոոպերացիայի ներկայա-
ցուցիչը:

ը) Շեֆ-գործարանի ներկայացուցիչը:

Շրջանային հարկահանձնաժողովներէ վրա հետե-
յալ պարտականութիւններն են դրվում՝

ա) Քննութեան առնել և շրջանային գործադիր
կոմիտեյին ի հաստատութիւն ներկայացնել առանձին
գյուղխորհուրդների համար սահմանված յեկամտա-
բերութեան նորմաները:

բ) Քննել և հաստատել գյուղատնտեսական մը-
թերքները մասնավոր շուկայում գոյացած գներով
վաճառող տնտեսութիւններին և վոչ գյուղատնտեսա-
կան յեկամուտներ ունեցողներէ ցուցակները և այդ
աղբյուրներից ըստացած յեկամտի գումարները:

գ) Քննել և ներկայացնել շրջագործկոմին ի հա-
տատութիւն՝ սղաններն ու պարտավորութիւնները
չարամտորեն չկատարող տնտեսութիւնների ցուցակ-
ները:

դ) Քննել և հաստատել հարակից լրիւ կամ մաս-

նակի չափով ազատվող տնտեսութիւնների ցուցակ-
ները:

յե) Արտոնութիւն տալ բնական աղետներից տու-
ժած տնտեսութիւններին:

զ) Քննել և լուծել հարկատուների (վորոնց թվում
և կոտնտեսութիւնների) դանդառները:

ե) Քննել անհատական կարգով հարկվող տնտե-
սութիւնների ցուցակները և վորոշել նրանց յեկա-
մուտները:

Շրջանային գործադիր կոմիտեներին և գյուղխոր-
հուրդներին (իսկ հարկ յեղած դեպքում՝ քաղխորհր-
դին) վրա յե դրվում հարկի չափը վորոշելու համար
անհրաժեշտ տվյալների ճիշտ ու ժամանակին հաշ-
վառման, հարկվող յեկամուտները և հարկը ճիշտ
վորոշելու, հարկաթերթերը հանձնելու և հարկը լրիւ
դանձելու պարտասխանատվութիւնը:

2. Գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են
գյուղական հարկային հանձնաժողովներ:

Գյուղական հարկային հանձնաժողովի անդամներ
են՝

ա) Գյուղխորհրդի նախագահը, — նախագահ:

բ) Գյուղխորհրդի ֆին. սեկցիայի ներկայացու-
ցիչը:

գ) Գյուղխորհրդի դաշտագործութեան (հողային
սեկցիայի) ներկայացուցիչը:

դ) Կոտնտեսութեան վարչութեան ներկայացու-
ցիչը:

յե) Մեկ հարվածային կոտնտեսական:

զ) Գյուղխորհրդի կազմի մեջ մտնող մեկ առա-
ջավար մեծատնտես:

ե) Տեղի արհեստագործական կոոպերացիայի
ներկայացուցիչը:

ը) Կարմիր բանակայինների ընտանիքների ներ-
կայացուցիչները:

Գյուղական հարկային հանձնաժողովներին վրա

հետևյալ պարտականություններն են դրվում:

ա) Գյուղի տնտեսությունների, նրանց գյուղատնտեսական յեկամուտների աղբյուրների հաշվառումը վոչ գյուղատնտեսական և շուկայի գներով միջերդներ վաճառող տնտեսությունների ցուցակները կադմեյը և այդ յեկամուտները վորոշելն ու գյուղխորհրդելն: ներկայացնելը:

բ) Անհատական կարգով հարկման յենթակա կուլակային տնտեսությունների յեկամուտների վորոշելը, ցուցակների հաստատումն ու քննությունը:

դ) Գյուղհարկից աղատվող սակավազոր կուլտնտեսականների և աշխատավորական մենատնտեսների ցույակները կադմեյը, քննելը, հաստատելը և գյուղխորհրդելն ներկայացնելը:

դ) Հարկատուների դիմումների և դանդառների քննությունը իր յեղրակացությունը գյուղխորհրդելն ներկայացնելը:

106. Բորոր հիմնարկները, կադմակերպություններն ու ձեռնարկությունները պարտավոր են Ֆինանսական որդաններին, շրջանային դործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին, նրանց պահանջով ճիշտ տեղեկություններ տալ հարկատուներին վճարված դումարների մասին:

107. Կուլտնտեսությունների հարկին վերաբերյալ դիմումներն ու դանդառները տրվում են շրջանային Ֆինանսական բաժնին, վորն ամենաուշը յերեք ուրում պետք է հանձնի դրանք իր յեղրակացություն հետ շրջանային հարկային հանձնաժողովնելն, ի քննություն:

Շրջանային հարկային հանձնաժողովների վորոշումները կարելի յե բողոքարկել յերկրային ու մարդային Ֆինանսական բաժնին, իսկ յերկրային ու մարդային բաժանում չունեցող դաշնակից հանրապետություններում և ինքնավար հանրապետություններում՝ Ֆինանսների ժողովրդական կոմիտարիատին:

Մարդային ու յերկրային Ֆինանսական բաժնիները և ինքնավար հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտարիատների վորոշումները կարելի յե բողոքարկել դաշնակից հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտարիատները:

108. Կուլտնտեսականների և անհատական տնտեսությունների գյուղատնտեսական հարկին վերաբերյալ բորոր դիմումներն ու դանդառները տրվում են գյուղխորհուրդներին, վորոնք պարտավոր են անհապաղ հանձնել դրանք գյուղական հարկային հանձնաժողովներին ի քննություն:

Գյուղական հարկային հանձնաժողովների վորոշումները կարելի յե բողոքարկել շրջանային հարկային հանձնաժողովները, իսկ շրջանային հարկային հանձնաժողովների վորոշումները, դաշնակից ու ինքնավար հանրապետությունների մարդային ու յերկրային Ֆինանսական բաժնիները և Ֆինանսների ժողովրդական կոմիտարիատները:

109. Դիմումներ ու դանդառներ տալու և քննելու համար սահմանվում են հետևյալ ժամկետները՝

ա) յեկամուտի աղբյուրները սխալ հաշվելու, յեկամուտը վորոշելու և հարկը հաշվելու դեմ տրվող դանդառները, ինչպես և արտոնություններ ստանալու համար տրվող դիմումները (բացի տարերային աղետների համար ստացվելիք արտոնություններից), պետք է տրվեն հարկի ծանուցագրերը հարկատույին հանձնելուց ամենաուշը տասն ուրվա ընթացքում:

բ) տարերային աղետների պատճառով արտոնություններ ստանալու դիմումները հանձնվում են մինչև յեկամուտի աղբյուրների հաշվառում սկսվելը, յեթե աղետը տեղի յե ունեցել հաշվառումից առաջ, իսկ մնացած դեպքերում դիմումները հանձնվում են տարերային աղետը տեղի ունենալուց ամենաուշը տասն ուրվա ընթացքում:

դ) Դիմումներն ու դանդառները պետք է քննվեն ամենաուշը հանձնվելուց տասն որվա ընթացքում:

110. Դիմումներն ու դանդառներ տալը չի դադարեցնում հարկի դանձումը: Այն դեպքերում, յերբ վորոշում կայացվի հոգուտ հարկատվի, սխալ դանձված գումարները և վերցված գույքը պետք է վերադարձվի տասն որում: Յեթե հարավոր չե գույքը վերադարձնել վաճառված լինելու պատճառով, պետք է հատուցվի նրա լիակատար արժեքը:

Հատված VII

ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՏԵՍԻԱՆԱ

ՏՎՈՒԹՅՈՒՆԸ

111. Յեկամուտի աղբյուրները թաղցնելու համար հարկատուները տուգանվում են վարչական կարգով, կամ յենթարկվում են դատական պատասխանատվության:

Տուգանվում է գյուղական խորհուրդը: Տուգանքը չպետք է դերադանցի գյուղատնտեսության հարկի կրկնապատիկ գումարից:

Տուգանելու վերաբերյալ գյուղխորհրդի ընդունած վորոշման դեմ կարելի յե դանդառ տալ չրջանային գործադիր կոմիտեյին, վորի վորոշումը վերջնական է:

112. Կոլտնտեսությունների հարկը հաշվելու համար սխալ տեղեկություններ տվող անձինք տուգանվում են մինչև 25 ոտրլի:

113. Յեթե կոլտնտեսականներն ու անհատական տնտեսությունները որենքով սահմանված ժամկետում չեն վճարում իրենց տնտեսությունների հարկը, այդ դեպքում գյուղխորհուրդները պարտավոր են նրանց նկատմամբ գործադրել հարկադիր դանձման միջոցներ, միանգամայն համաձայն հարկեր և վոչ հարկային վճարումներ դանձելու կանոնադրության:

Մասնավորապես հարկը չվճարողների գույքը վեր և գրվում է վաճառվում է, իսկ վճարումն ուշացնելու համար տույժ է վերցվում հետևյալ չափով՝

Կոլտնտեսականներից 0,1 տոկոս, կոլտնտեսությունից և աշխատավոր մենատնտեսներից՝ 0,2 տոկոս, կուլակային տնտեսություններից՝ 1 տոկոս, ամեն մի ուշացրած որվա համար:

Հատված VIII

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ

ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

114. Գյուղհարկի դանձված բոլոր գումարները հատկացվում են տեղական բյուջեյին հետևյալ կարգով:

ա) Գանձված գումարի 50 տոկոսը տրվում է և չրջանային բյուջեյին:

բ) Գանձված հարկի մնացած 50 տոկոսը տրվում է և չրջանային բյուջեյին:

Հատված IX

ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

115. Դաշնակից ու ինքնավար հանրապետություն
ների ժողովրդական կոմիսարների խորհուրդների և
տեղական գործադիր կոմիտեների սույն կանոնա-
դրութամբ նախատեսված վորոշումները պետք է
հրապարակվեն ամենաուշը մինչև 1934 թ. հունիսի
10-ը:

116. Սույն կանոնադրության վերաբերյալ հրա-
հանգներ հրատարակելու գործը հանձնարարվում է
ԽՍՀՄ-ի ֆինանսների ժողովրդական կոմիսարիա-
տին:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
1934 թ.

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՈՐԵՆՔԸ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ

1934 թ.

ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՈՐԵՆՔԸ

Գյուղի կուլտուրական և տնտեսական շինարարութեան պլանը կատարելու նպատակով, ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտեները Խորհուրդը վերաշում են.

1. Աղբարնակութեան կուլտուրական և տնտեսական կարիքներին բավարարելու համար, ինքնահարկումը կատարվում է գյուղական վայրերում և ամառանոցային ավաններում:

2. Ինքնահակամբ հավաքված միջոցների 75 տոկ. մտցվում է գյուղական ու շրջանային բյուջեները և ծախսվում է բյուջեյով նախատեսված կուլտուրական ու տնտեսական ձեռնարկումների վրա, իսկ 25 տոկոսը մնում է գյուղական խորհրդի լիակատար տրամադրության տակ, գյուղի այն կարիքների համար, վերոնշյալ նախատեսված գյուղական բյուջեներում:

3. Ինքնահարկումը կարող է կատարվել միմյալ տվյալ գյուղի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր ժողովի վերջամբ:

Ինքնահարկում սահմանելու համար, ժողովին պետք է ներկա լինի տվյալ գյուղի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընթանուր թվի առ-

նվազին կեսը: Յեթե ժողովին ներկա չլինի այդքան թվով քաղաքացի, ապա հրավիրվում է յերկրորդ ժողով, վորն իրավադոր է համարվում, յեթե նրան մասնակցում է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թվի մի յերրորդ մասը:

Ինքնահարկումը սահմանվում է ժողովում ներկա գտնվող քաղաքացիների ձայների մեծամասնությամբ: Ժողովում ընդունված վորոշումները պարտադիր են բոլոր քաղաքացիների համար:

4. Քաղաքացիների ընդհանուր ժողովը քննում է այն ձեռնարկումները, վորոնք իրադրժմում են ինքնահարկմամբ հավաքված միջոցներով, սահմանվում է ինքնահարկման դրույքներ՝ վճարողների առանձին կատեգորիաների համար, սույն վորոշման մեջ նախատեսված սահմաններում, ինչպես և ինքնահարկի վճարների մուծման ժամկետները:

Ծանոթութուն. — Ինքնահարկի մուծման ժամկետները սահմանվում են այնպիսի հաշվով, վոր վճարումները սկսվեն ամենաուշը սեպտեմբերի 15-ին և վերջանան մինչև 1934 թ. դեկտեմբերի մեկը:

5. Ինքնահարկմանը մասնակցում են՝

ա) կոլտնտեսականները,

բ) անհատական գյուղացիական տնտեսությունները.

գ) մշտական գյուղական վայրերում ապրող, թեպետ գյուղատնտեսություն չպարապող գյուղացիները.

6. Ինքնահարկման չեն մասնակցում գյուղատնտեսություն չպարապող՝

ա) բանվորներն ու ծառայողները.

բ) Խորհրդային Միության հերոսները, ԽՍՀՄ-ի պատվանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսները.

գ) կադրային, շարային և ստորին պետկազմի

ժամկետային (անընդհատ) կամ զերծակետային ծառայության մեջ գտնվող զինվորականները, հաշված նաև 1934 թ. աշնանը դորակոչվածներին.

դ) Բանվորագյուղացիական կառմիր բանակի միջին, ավագ և բարձր պետկազմի կադրային ու ռեզերվում գտնվող զինվորականները.

յ) ստորին հրամկազմի այն զինվորականները, վորոնք յերկարատև արձակուրդից փոխադրվել են տերիտորիալ զորամասերի փոփոխական կազմի մեջ.

զ) Բանվորագյուղացիական կառմիր բանակի յերկարատև արձակուրդում, պահեստում և տերիտորիալ մասերի փոփոխական կազմում գտնվող միջին, ավագ ու բարձր պետկազմի այն անձինք, վորոնք վորպես Պաշտ-Ավիաբիմի հաստիքային աշխատողներ, պարապում են աշխատավորների ռազմական պատրաստությունում.

ե) նախկին կառմիր զավարդականները և կառմիր պարտիզանները.

ը) Պետական հատուկ նշանակություն ունեցող ձեռնարկությունների ու կառուցվածքների, ռազմական նացված պահակի, ռազմականացված հրեջ պահակի, շարային ու վարչական տեսկան կազմին պատկանող անձինք, բանվորագյուղացիական միլիցիայի ոսերատիվ, շարային և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք, ինչպես և ուղղիչ աշխատանքային հիմնարկների ոսերատիվ և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք.

թ) պատերազմի ու աշխատանքի հաշմանդամները, վորոնք դատված են հաշմանդամություն առաջին, յերկրորդ և յերրորդ աստիճանով.

ժ) Պետական որդանների կամ տեղական կազմակերպությունների թոշակառուները.

ժա) թոշակառու ուսանողները.

ժբ) կոոպերացված տնայնագործներն ու արհեստավորները.

Ծանոթություն.— «զ» և «դ» կետերում թը-
վարկված զինվորականները հարկման չեն մասնակ
ցում՝ այն դեպքում, յերբ նրանք ստացել են յեր
կարտուս արձակուրդ, փոխադրվել են պահեստ
կամ բոլորովին ազատվել են ծառայությունից՝
1934 թ. հունվարի մեկից հետո:

7. Ինքնահարկին չեն մասնակցում այն բանվոր-
ներն ու ծառայողները, վորոնք գյուղատնտեսությամբ
են պարապում տնամերձ հողամասում կամ բանջա-
րեղեն ու գետնախնձոր տնկելու համար նրանց հատ-
կացրած հողամասերում, ունեն միայն մի կով, մանր
անասուն ու խոտհարքներ, բայց չունեն դաշտամշա-
կության հող ու լճիկաններ, յեթե աշխատավարձը կադ-
մում է նրանց յեկամուտի հիմնական աղբյուրը:

8. Կոլտնտեսության անդամ-բանվորներն ու ծա-
ռայողները, յեթե նրանք իրենք կամ նրանց ընտանիքի
աշխատողակ անդամները կոլտնտեսության մեջ չեն
աշխատում, կամ նրանց կոլտնտեսության մեջ կատա-
րած աշխատանքը կրում է պատահական, վոչ սխտե-
մատիկ բնույթ (որինակ արձակուրդի ժամանակ, հան-
գստյան տրեքում և այլն) և կազմում է սակավաթիվ
աշխուր, ինքնահարկման չեն մասնակցում այն դեպքե-
րում, յերբ նրանց չհանրայնացված գյուղական տնտե-
սությունը չի գերազանցում 7-րդ հոդվածում հիշա-
տակված չափից:

9. Կոլտնտեսականների տնտեսությունների հա-
մար, ինչպես և հաստատուն գրույթներով ինքնահարկ-
մանը յենթարկվող մենատնտեսների տնտեսությունների
համար, յեթե նրանց տնտեսության կազմում կան վե-
ցերրորդ հոդվածի «բ», «գ», «դ», «յ», «զ», «է»,
«բ», «թ» կետերում հիշատակված անձինք, ինքնահար-
կումը նվազեցվում է 25 տոկոսով, իսկ տնտեսության
մեջ աշխատողակ ալլ տղամարդ չլինելու դեպքում՝
50 տոկոսով:

10. Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտե-

սություններն ինքնահարկմանը մասնակցում են հե-
տևյալ չափով:

Վնարդաների կատեգորիաները

Տնտ. ինքնա-
հարկման չափը

1. Այն կոլտնտեսականների տըն-
տեսությունները, վորոնք չու-
նեն չհանրայնացված յեկամուտ-
ներ, կամ ազատված են 1934 թ.
գյուղատնտեսական հարկից

5 ուրլի

2. Կոլտնտեսականների այն տըն-
տեսությունները, վորոնք 1934 թ.
յենթարկ յեն գյուղատնտեսական
հարկին

8-ից մինչև 20 ո.

3. Անհատական աշխատավորա-
կան այն տնտեսությունները, վո-
րոնք 1934 թ. ազատվել են գյու-
ղատնտեսական հարկից, կամ 1934
թ. գյուղատնտեսական հարկի յեն
յենթարկվում հաստատուն դը-
րույթներով

12-ից մինչև 50 ո.

4. Աշխատավորական անհատա-
կան այն տնտեսությունները վո-
րոնք 1934 թ. յենթարկվում են
գյուղատնտեսական հարկին պրո-
գրեսիվ գրույթներով

վոչ ալլելի բան գյու-
ղատնտեսական հար-

կի 100 տոկոսի չա-
փով:

Տվյալ գյուղում սահմանվում է միասնական հաս-
տատուն գրույթ յերկրորդ կադեգորիայի բոլոր տնտե-
սություններին համար, միասնական հաստատուն դը-
րույթ յերրորդ կատեգորիայի բոլոր տնտեսություն-
ների համար, ինքնահարկման միատեսակ տոկոսային
հարաբերություն գյուղատնտեսական հարկի նկատ-

մամբ չորրորդ կատեգորիայի բոլոր տնտեսությունների համար:

Յերրորդ կատեգորիայի տնտեսությունների ինքնահարկման դրույքները չեն կարող ավելի ցածր լինել, քան յերկրորդ կատեգորիայի տնտեսությունների համար սահմանվող ինքնահարկման դրույքները, իսկ չորրորդ կատեգորիայի տնտեսությունների ինքնահարկման չափը չի կարող ավելի ցածր լինել, քան յերրորդ կատեգորիայի տնտեսությունների դրույքը:

11. Կոլտնտեսականների այն տնտեսությունների համար (առաջին և յերկրորդ կատեգորիայի) և աշխատավոր մենատնտեսների այն տնտեսությունների համար, վորոնց ինքնահարկումը սահմանվում է հաստատուն դրույքներով (յերկրորդ կատեգորիա) և վորոնց կազմում կա յերկու հոգուց վոչ ավելի աշխատունակ անդամ, ինքնահարկման գումարից հետևյալ դեղչն է արվում ընտանիքի անաշխատունակ անդամների համար՝ 3 անաշխատունակ անդամ լինելու դեպքում՝ ինքնահարկումը նվազեցվում է 20 տոկոսով, չորս և ավելի անաշխատունակ լինելու դեպքում՝ 30 տոկոսով:

12. Գյուղխորհուրդներին իրավունք է վերապահվում մասամբ կամ ամբողջովին ազատել ինքնահարկումից կոլտնտեսականների առանձին ընտանիքները և անհատական աշխատավորական տնտեսությունները:

13. Գյուղական վայրերում ապրող, սակայն գյուղական տնտեսությամբ չպարապող չկոոպերացված անաշխատորձներն ու արհեստավորները և վոչ վարձու աշխատանքով աշխատավրական յեկամուտ ունեցող մյուս քաղաքացիները ինքնահարկմանը մասնակցում են հետևյալ չափով՝

Տարեկան յեկամտի չափը

Մինչև 900 ռուբլի
900-ից ավելի մինչև 1500 ռ.

Ինֆանտարկման

չափը ռուբլով

7 ռուբլի

15 ռուբլի

1500-ից ավելի մինչև 2100 ռ.	20 ռուբլի
2100-ից ավելի մինչև 2700 ռ.	45 ռուբլի
2700-ից ավելի մինչև 3300 ռ.	60 ռուբլի
3300-ից ավելի	80 ռուբլի

Գյուղական խորհուրդներին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում ինքնահարկումից ազատել վոչ գյուղատնտեսական յեկամուտ ունեցող այն քաղաքացիներին, վորոնց յեկամուտը 480 ռուբլուց ավելի չէ:

14. 13-րդ հոդվածում մատնանշված անձանց ինքնահարկման չափը վորոշելիս, պետք է յեշնել այն յեկամուտից, վորը հաշվի յե առնվում յեկամտային հարկի յենթարկելու համար:

15. Կոլախային տնտեսություններն ինքնահարկման են յենթարկվում 1934 թ. գյուղատնտեսական հարկի 200 տոկոսի չափով:

16. Այն անձինք, վորոնք գյուղատնտեսությամբ չեն պարապում, ունեն վոչ աշխատավորական յեկամուտներ և յենթարկվում են յեկամտային հարկի, ինքնահարկմանը մասնակցում են 100 տոկոսով այն գումարից, վորը պետք է հասներ նրանցից, յեթե ըստ իրենց յեկամտի յենթարկվելին գյուղատնտեսական հարկի:

17. Գյուղական խորհուրդը ինքնահարկման մասին գյուղական ընդհանուր ժողովի ընդունած վորոշումը, իր յեղրակացության հետ միասին, ներկայացնում է շրջանային գործադիր կոմիտեին ի ընտելութուն:

Յեթե տասն որվա ընթացքում Շրջանային Գործադիր Կոմիտեն գյուղական խորհրդին չհաղորդել, թե վորոշումը չեղյալ է հայտարարված, ապա այդ վորոշումն ուժի մեջ է մտնում և պարտադիր է բոլոր քաղաքացիների համար:


18. Գյուղական խորհուրդը ինքնահարկման գումարները հավաքում և քաղաքացիների ընդհանուր

ԿՈՆԿՐԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅԲՆԵՐԸ ՄԵՎ ՀԵԿՏԱՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԻՔԼԻՆԵՐԸ

ԾՐՁԱՆՆԵՐ	ԳՈՍՈՒՆԱՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏ ԱՐՏԻՆԵՐԻ ԴԱՄԱՐ										ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ										
	Հայրենասիրական կուլտուրային, կերպարային և ցանկալի խոսքեր	Կարևորագույն	Կուսակցական	Արևմտահայկական	Միջազգային	Բանջարեղենային	Բուսական	Խոտաբույսեր և սնունդային ցանքեր	Այգիներ և պտղատու ծառեր	Խաղողի այգիներ	Հայրենասիրական կուլտուրային, կերպարային և ցանկալի խոսքեր	Կարևորագույն	Կուսակցական	Արևմտահայկական	Միջազգային	Բանջարեղենային	Բուսական	Խոտաբույսեր և սնունդային ցանքեր	Այգիներ և պտղատու ծառեր	Խաղողի այգիներ	
1	Արարան	2-30	3-50				15-00				3-20	4-95				21-00					
2	Ալի ազիզի դի	2-30	3-00			11-50	19-00		17-00		3-20	4-25			16-10	26-60				24-80	
3	Ախտա	2-30	3-50				13-00				3-20	4-95				16-20					
4	Աղբարա	2-30	3-00				13-00				3-20	4-25				18-20					
5	Առաքարակ	2-80	3-00			12-50	17-00		20-00		3-90	4-25			17-50	2-80				28-60	
6	Բառաբեկչար	2-60	3-20			11-00	13-00				3-60	4-60			15-40	18-20					
7	Քեռիքենդ	2-60	3-00			12-00	17-00		18-00		3-60	4-25			16-80	23-80				25-70	
8	Փաշալու	2-00	3-25			10-50	13-00		17-00		2-80	4-60			14-70	18-20				24-30	
9	Գորիս	2-60	3-25				15-00		17-00		3-60	4-60				21-00				24-30	
10	Դիլիջան	2-30	3-00			12-00	17-00				3-20	4-25			16-80	23-80					
11	Թալին	2-60	3-00			11-00	13-00		17-00		3-60	4-25			15-40	18-20				24-30	
12	Իջևիկան	2-60	3-00			13-00	17-00		17-00		3-60	4-25			18-20	23-80				25-30	
13	Կոտայք	2-80	3-00			13-00	17-00		18-00		3-90	4-25			18-20	23-80				32-70	
14	Համալու	3-00	3-00			12-50	20-00		23-00		4-20	4-25			17-50	28-00				90	
15	Հարաբիլիսա	2-30	3-50			12-50	17-00				3-20	4-95			17-50	23-80					
16	Հափան	2-00	3-00			12-50	13-00		15-00		2-80	4-25			17-50	18-20				21-60	
17	Հուրդուղուլի	3-00	3-00			13-00	20-00		20-00		4-00	4-25			18-20	28-00				28-60	
18	Մարտունի	2-30	3-00				13-00				3-20	4-25				18-20					
19	Արթիկ	2-60	3-25				17-00				3-60	4-60				23-80					
20	Մեղրի	2-00	3-00			12-50	17-00		21-00		2-80	4-25			17-50	23-80				30-60	
21	Ն. Բայադեա	2-30	3-25			11-00	13-00				3-20	4-60			15-40	18-20					
22	Սիսիան	2-30	3-00			11-00	13-00				3-20	4-25			15-40	18-20					
23	Շամադին	2-60	3-25			13-00	15-00		17-00		3-60	4-60			18-20	21-00				24-30	
24	Ստեփանավան	2-80	3-50				15-00				3-90	4-95				21-00					
25	Վաղարշապատ	3-00	3-00			13-00	20-00		20-00		4-20	4-25			18-20	28-00				28-60	
26	Վեդի	2-80	3-00			12-50	17-00		20-00		3-90	4-25			17-50	23-80				28-60	
27	Լենինական	2-80	3-25			11-50	19-00				3-90	4-60			16-10	26-60					
		2-50	3-25	2a	2a	12-50	18-00	14-50	110	30a	20-00	3-50	4-80	2-80	2-80	17-50	25-00	20a	1-60	43a	28-60

1934 ԹՎԻ ՅԵՎԱՄԱՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՄԱՅՈՒՄ, ԸՍՏ ԾՐՁԱՆՆԵՐԻ

ԾՐՁԱՆՆԵՐ	Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն										Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն									
	Մեկ հեկտար տարածության յեկամտարիկույունը ուրը.										Մեկ գլուխ անասունի յեկամտար. ուրը.									
	Ցանց և ալիստա-կան խոտ	Բայալակ	Չալվուկ	Միջազգային	Կարտոֆիլ	Բանջարեղեն, բուսան	Խաղողի այգիներ	Պտղատու այգիներ	Խոտաբույս	Թխանց	Կովեր, ժառանգներ, ցուլեր	Չիլեր, չորիներ	Ցեղեն և գանգներ	Ուղտեր	Ե Ղ Ե Ր	Վաղարշապատ և այլքեր				
Արարան	60				150	450		26			16									
Ալի ազիզի դի	72			400	190	520	660	28			17									
Ախտա	60			300	150	450		26			16									
Աղբարա	66				170	450		28			19									
Առաքարակ	80			510	170	570	800	26			16									
Բառաբեկչար	60			400	150	450		26			16									
Քեռիքենդ	60			450	150	570	750	22			14									
Փաշալու	60			300	150	450	660	21			15									
Գորիս	72			400	170	520	660	22			15									
Դիլիջան	66			400	190	570		28			19									
Թալին	72			350	190	450	660	22			16									
Իջևան	72			570	190	570	660	26			17									
Կոտայք	80			570	190	570	750	26			15									
Համալու	130			510	190	630	900	26			13									
Հարաբիլիսա	66			510	190	570		28			18									
Հափան	60			510	150	450		22			13									
Հուրդուղուլի	130			570	190	630	800	26			13									
Մարտունի	60			350	150	450		26			16									
Արթիկ	72			400	170	520		26			16									
Մեղրի	66			510	150	570	800	22			14									
Ն. Բայադեա	60			470	150	450		26			16									
Սիսիան	66			350	170	570		26			16									
Շամշադին	72			570	190	520	660	22			16									
Ստեփանավան	80			400	190	570		32			22									
Վաղարշապատ	130			510	190	630	800	26			13									
Վեդի	100			510	190	570	800	26			13									
Լենինական	60			400	190	570		26			16									
	70	70	500	560	180	550	800	700	28	500	16	17	15	17	6	9				



ՀՀ Ազգային գրադարան



NL0927839

1937

1

3467